երբ ճանապարհ ընկանք դէպի Աղթամար, ես խորին տհաճութեամբ էի գնում, թէեւ իմ դժկամութեան մասին Ասլանին ոչինչ չյայտնեցի:

Առաւօտից բաւական անցել էր, երբ հասանք Աղթամարայ «դրսի տունը». դա եւս Կտուց անապատի «դրսի տանէ նման գտնւում էր ցամաքի վրայ եւ բովանդակում էր իր մէջ վանքի ամբողջ տնտեսութիւնը: Զանազանութիւնը միայն նրանումն էր, որ Կտուց անապատի «դրսի տանէ մէջ կար եւ մի կրթարան, ուր նորընծայ աբեղաները պէտք է տարիներով նախապատրաստուէին, փորձուէին եւ ապա վանքում ներս ընդունուէին ու միաբանութեան կարգը մտնէին, իսկ այստեղ մի այդպիսի նախակրթարան չկար: Դա արդէն նշան էր, որ վանական կարգերը այստեղ այնքան խիստ չէին: Այստեղ «դրսի տունը» ծառայում էր միայն վանքի տնտեսութեան համար: Այստեղ բացի ամբարներից, ախոռատներից, մշակների ու հովիւների բնակարաններից, կային եւ մի քանի սենեակներ, յատկապէս կաթողիկոսի համար պատրաստուած, ուր, երբեմն կղզուց դուրս գալով, նստում էր նա, ժողովրդի գործերին նայելու:

«Դրսի տանէ մէջ մեզ ասացին, որ կաթողիկոսը հազիւ թէ ժամանակ կունենայ մեզ ընդունելու, որովհետեւ նա պէտք է գնայ վանական մի կալուածքի վիճելի սահմանները որոշելու, որտեղ ներկայ կը լինի եւ տեղային գայմագամը: Մենք դիմեցինք դէպի կղզին նոյն փառաւոր նաւակով, որ պատրաստուած էր կաթողիկոսին դուրս հանելու համար:

Ծովը հանդարտ էր: Կղզին երեւում էր հեռուից, կարծես թէ ներկուած լինէր բոսորային կարմրութեամբ: Արիւ՛ն էր հոտում այդ կղզին, արիւ՛ն... Արիւնով էին ներկուած նրա ապառաժները, սկսեալ այն օրից, երբ խստասիրտ Տիրանի դահիճները կոտորում էին Ռշտունեաց Զօրա նահապետի ազգատոհմը, չխնայելով թէ կանանց, թէ մանկանց... Արեան գոյն էին ստացել արեգակի ճառագայթները,որ շողշողում էին կարմրագոյն ժայռերի վրա... Արիւնով էր ներկուած եւ հայրապետական աթոռը, որի վրայ բազմած էր եւ ներկայ կաթողիկոսը... Նրա նախորդը զոհ գնաց մի անյայտ եղեռնագործութեան...

Ես շատ բան էի լսել Զօլամէրիկի Մար-Շիմոնի մասին, յետոյ առիթ ունեցայ տեսնելու նրան: Կորդոաց լեռների այդ պատրիարք-դիւցազնը թողել էր իմ վրայ խորին տպաւորութիւն: Ես առաջին անգամ տեսայ մի կրօնական անձնաւորութիւն, որ միացրել էր իր մէջ հոգեւոր հայրապետի եւ մարմնաւոր իշխանի կոչումը, — որ մի ձեռքում խաչ, առաջնորդում էր իր ժողովրդին դէպի երկնայինը, դէպի հոգեւորը, իսկ միւս ձեռքում սուր, պաշտպանում իր ժողովրդին, երբ որեւէ վտանգ էր սպառնում նրան երկրային թշնա-